ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի

2017թ. ապրիլի 11-ի արձանագրությամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ
Դիտորդ խորհրդի նախագահ
Ա. Չիտչյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Ընդհանուր ժողովի

2017թ. մայիսի 27-ի թիվ 1 որոշմամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ նախագահ
Ա. Չիտչյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետություն
քաղաք Երևան

2017թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.«Կազմակերպությանն անդամակցության կարգը» (այսուհետ նաև՝ Կարգ) ՀՀ օրենսդրությանը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքին, կազմակերպության կանոնադրությանը և ներքին իրավական փաստաթղթերին համապատասխան, սահմանում է «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությանը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) անդամագրվելու, կամավոր կամ պարտադիր կերպով անդամակցությունը դադարեցնելու ընթացակարգերը, ժամկետները և պայմանները:

1.2.Սույն Կարգում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Դիտորդ խորհրդի որոշումների համաձայն:

1.3.Սույն Կարգը ուժի մեջ է մտնում Դիտորդ խորհրդի կողմից ընդունման պահից:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

2.1.Կազմակերպությանն անդամակցել կարող են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր պարտավորվում են կատարել Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով, կարգերով և կանոններով սահմանված պահանջները, պատրաստ են իրենց մասնագիտական, գործարար ունակությունները դրսևորել սնանկության վարույթները պատշաճ իրականացնելու նպատակով և բարեխղճորեն վճարել մուտքի, անդամակցության և Կազմակերպության կողմից սահմանված այլ վճարները:

2.2.Կազմակերպությանը կարող են անդամակցել այն թեկնածուները, ովքեր համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

- ունեն բարձրագույն կրթություն,
- ունեն պետական լիազոր մարմնի կողմից տրված որակավորման վկայական,
- անդամակցության դիմում ներկայացնելու օրվան նախորդած վերջին 5 տարվա ընթացքում առնվազն 3 տարի վարել են որևէ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման կամ ղեկավարման հետ կապված պաշտոններ կամ անցել են համապատասխան ստաժավորում

սնանկության գործով կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունում,

- ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվառված են որպես անհատ ձեռնարկատեր,
- ներկայացրել են տեղեկանք դատվածության վերաբերյալ,
- կատարել են համապատասխան վճարները, որոնք նախատեսված են գործող օրենսդրությամբ և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով,
- անդամակցության գրավոր դիմում են ներկայացրել՝ կցելով օրենքով և սույն Կարգի թիվ 1 Հավելվածով նախատեսված բոլոր փաստաթղթերը,
- անդամակցության դիմում ներկայացնելիս դիմորդները հայտնում են իրենց համաձայնությունը՝ Կազմակերպության կանոնադրության, գործող կանոնների և կարգերի վերաբերյալ,
- կատարել են այլ պահանջներ, որոնք սահմանված են Կազմակերպության ներքին փաստաթղթերով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1.Կազմակերպությունը իրավունք ունի ընդունել նոր անդամներ, անդամակցության հիմքը հանդիսանում է գրավոր դիմումը:

3.2.Կազմակերպությանն անդամակցելու համար կառավարչի թեկնածուն պետք է Կազմակերպության կանոնադրությամբ և սույն Կարգով սահմանված ձևով գրավոր դիմում ներկայացնի Դիտորդ խորհրդի նախագահին, որին պետք է կցված լինեն սույն Կարգի 3.3. կետով նախատեսված փաստաթղթերը:

3.3. Դիմումին կցվում են՝

- անձնագրի պատճենը,
- բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմի պատճենը,
- պետական լիազոր մարմնի կողմից տրված որակավորման վկայականի պատճենը,

- տեղեկանք որևէ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման կամ ղեկավարման հետ կապված պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ,
- տեղեկանք դատվածության վերաբերյալ,
- անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար սահմանված կարգով տրված վկայականի պատճենը (առկայության դեպքում) ,
- անդամակցության մուտքի վճարի վճարման անդորրագրի պատճենը,
- 3x4 չափի երեք գունավոր լուսանկար,

3.4.Անդամակցության դիմումին կցվում են նախատեսված փաստաթղթերի բնօրինակները և պատճենները:

3.5.Կազմակերպության աշխատակազմի համապատասխան աշխատակիցները ստուգում են ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և տեղեկատվության հավաստիությունը, դրանց համապատասխանությունը առաջադրվող պահանջներին, որից հետո փաստաթղթերի բնօրինակները հետ են վերադարձվում թեկնածուին:

Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում կատարվում է դիմումի գրանցումը:

3.6.Այնպիսի դեպքերում, երբ Կազմակերպությանն անդամակցելու համար կառավարչի թեկնածուն չի ներկայացնում սույն Կարգի 3.3 կետով նախատեսված փաստաթղթերը կամ տրամադրում է ոչ հավաստի տեղեկություններ, Կազմակերպության Դիտորդ խորհուրդը մերժում է անդամակցության դիմումը:

3.7.Կառավարչի թեկնածուի կողմից համապատասխան կարգով անդամակցության դիմումի ներկայացումից հետո Դիտորդ խորհուրդը եռօրյա ժամկետում քննարկելով դիմումները, կայացնում է կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- թեկնածուին Կազմակերպություն ընդունելու մասին, եթե անդամակցության դիմումը համապատասխանում է Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով սահմանված պահանջներին,

- թեկնածուի անդամակցությունը մերժելու մասին, եթե անդամակցության դիմումը չի համապատասխանում Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով սահմանված պահանջներին:

3.8.Դիտորդ խորհրդի որոշումը ուժի մեջ է մտնում դրա կայացման պահից:

3.9.Կազմակերպությանն անդամակցելու համար սահմանված մուտքի վճարի վճարումը կարող է կատարվել ինչպես կանխիկ, այնպես էլ Կազմակերպության հաշվեհամարին բանկային փոխանցում կատարելու միջոցով:

3.10.Սնանկության գործով կառավարչի թեկնածուի անդամակցության դիմումը մերժելու դեպքում նրա կողմից վճարված մուտքի վճարը վերադարձվում է:

3.11.Դիտորդ խորհրդի կողմից անդամակցության որոշումը կայացնելուց երեք օր հետո սնանկության գործով կառավարչի տվյալները մուտքագրվում են Կազմակերպության միասնական գրանցամատյանում:

3.12.Թեկնածուի անդամակցությունը մերժելու վերաբերյալ որոշումը տաս աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է դիմող անձին և կարող է բողոքարկվել դատական կարգով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.1.Սնանկության գործով կառավարիչը իրավունք ունի ցանկացած ժամանակ դիմում ներկայացնել Կազմակերպությունից դուրս գալու վերաբերյալ:

4.2.Անդամակցության դադարեցումը կատարվում է հետևյալ ընթացակարգով.

4.2.1.Սնանկության գործով կառավարիչը իր հայեցողությամբ անդամակցությունից հրաժարվելու դեպքում դիմում է ներկայացնում Կազմակերպության Դիտորդ խորհրդի նախագահին:

4.2.2.Սնանկության գործով կառավարչի դիմումը գրանցվում է Գործադիր տնօրենի կողմից և հաջորդ օրը կառավարչին ներկայացվում է շրջիկ թերթի ձևաթուղթը, որի ձևը նախատեսված է սույն Կարգի թիվ 2 Հավելվածով:

4.2.3.Կազմակերպության մասնագիտացված մարմինների կողմից ստուգվում են սնանկության գործով կառավարչի ընթացիկ գործունեությունը:

4.3.Դիտորդ խորհրդի կողմից չի քննարկվում անդամակցության դադարեցման դիմումը հետևյալ դեպքերում՝

- դատարանում քննվում է սնանկության գործով կառավարչի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ միջնորդություն,
- սնանկության գործով կառավարչի նկատմամբ իրականացվում են վերահսկողական բնույթի գործառույթներ և /կամ/ նրա նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ,
- սնանկության գործով կառավարիչը մինչև անդամակցության դադարեցման դիմումի ներկայացման օրը չի կատարել Կազմակերպության կողմից սահմանված անդամավճարի և այլ վճարների կատարումը,
- ցանկացած այլ դեպքերում, որոնք նախատեսված են Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով:

4.4.Դիտորդ Խորհուրդը անդամակցության դադարեցման որոշում կայացնում է միայն վերահսկողական բնույթի գործառույթների, և /կամ/ սնանկության գործով կառավարչի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ավարտից հետո:

4.5.Սնանկության գործով կառավարչի անդամակցությունից հրաժարվելու դիմումին պետք է կցվի Կազմակերպության համապատասխան մասնագիտացված մարմինների ղեկավարների կողմից ստորագրված շրջիկ թերթը:

4.6.Սույն Կարգի 4.3. կետում նշված հիմքերի բացակայության դեպքում անդամակցության դադարեցման դիմումը պետք է քննարկվի Դիտորդ խորհրդի կողմից յոթ օրվա ընթացքում: Դիմումի քննարկման յոթ օրյա ժամկետը կարող է երկարացվել՝ կապված ընթացիկ վերահսկողական բնույթի գործառույթների և կարգապահական վարույթների հետ:

4.7.Կազմակերպության անդամի կողմից անդամակցությունից հրաժարվելու դիմումը խոչընդոտ չէ, որպեսզի անդամը հեռացվի Կազմակերպությունից իր կողմից թույլ տրված խախտումների հիմքով:

4.8.Կառավարչի դիմումի հիման վրա անդամակցության դադարեցման վերաբերյալ Դիտորդ խորհրդի կողմից որոշման կայացման հաջորդ օրը Դիտորդ խորհրդի

նախագահը համապատասխան գրություն է ուղարկում սնանկության գործեր քննող դատարաններին՝ իրազեկելով սնանկության գործերով կառավարչի իրավասությունների դադարեցման վերաբերյալ:

4.9.Կազմակերպության անդամի անդամակցության դադարեցման դեպքում նրա կողմից կատարված մուտքի և այլ վճարները վերադարձման ենթական չեն:

5. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ

5.1.Կազմակերպության Դիտորդ խորհուրդը իրավասու է որոշում կայացնել Կազմակերպության անդամի անդամակցության դադարեցման վերաբերյալ, եթե վերջինս թույլ է տվել ՀՀ օրենսդրության, Կազմակերպության կանոնադրության, կարգերի մեկ կոպիտ խախտում, պարբերական խախտումներ կամ թերի է կատարել իր պարտավորությունները, խախտել է իր պարտավորությունները Կազմակերպության հանդեպ և իր գործողություններով կամ անգործությամբ խոչընդոտել է Կազմակերպության գործունեությանը:

5.2.Դիտորդ խորհուրդը կարող է որոշում կայացնել իր անդամի անդամակցության դադարեցման վերաբերյալ հետևյալ դեպքերում՝

- կառավարիչը դիմել է այդ մասին,
- լրացել է նրա 65 տարին (պաշտոնավարման տարիքը), բացառությամբ սույն կանոնադրության 4.14. կետով նախատեսված դեպքերի,
- իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է սնանկության գործով կառավարչի գործունեության հետ անհամատեղելի այլ աշխատանքի,
- ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան վեց ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

- օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ մեղադրական դատավճիռը, որով անձը դատապարտվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի, կամ նա դատվածություն ունի պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
- դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել պարտապանի ֆինանսական առողջացմամբ,
- կառավարիչը թույլ է տվել կառավարչի՝ օրենքով սահմանված պարտականությունների կոպիտ կամ պարբերական խախտումներ: Կոպիտ է համարվում այն խախտումը, որն անհամատեղելի է կառավարչի վարքագծի կանոնների հետ: Պարբերական է այն խախտումը, որը առանձին վերցրած, թեև կոպիտ խախտում չի համարվում, սակայն իր պարբերականությամբ անհամատեղելի է կառավարչի վարքագծի կանոնների հետ:

5.3.Եթե կառավարիչը սնանկության գործով կառավարչի որակավորում ստացել է օրենքի պահանջների խախտմամբ, ապա կառավարչի լիազորությունները դադարեցվում են ՀՀ արդարադատության նախարարի որոշմամբ՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ խորհրդի եզրակացության հիման վրա: Որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով որոշումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

5.4.Լիազորությունները դադարեցված կառավարիչը պարտավոր է ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում իր մոտ պահպանվող՝ ընթացիկ սնանկության գործերով փաստաթղթերը և նյութերը հանձնել կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազորված անձին:

5.5.Սնանկության գործերով կառավարչի գործունեությամբ զբաղվելու պաշտոնավարման տարիքը լրանալու դեպքում «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի Դիտորդ խորհուրդը, հիմք ընդունելով կառավարչի՝ իր պարտականությունների կատարման ունակությունները և կարողությունները, կարող է որոշել թույլատրել կառավարչին մինչև հինգ տարի ժամկետով շարունակել զբաղվել սնանկության գործերով կառավարչի գործունեությամբ:

5.6.Եթե կառավարիչը պատշաճ ծանուցված է եղել և չի մասնակցում Դիտորդ խորհրդի նիստին, որտեղ քննարկվում է նրա անդամակցության դադարեցման հարցը, ապա դա արգելք չէ, որպեսզի վերջինիս նկատմամբ կայացվի անդամակցության դադարեցման վերջնական որոշում:

5.7.Մնացած բոլոր դեպքերում Կազմակերպության անդամին անդամությունից զրկելը Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է:

5.8.Սնանկության գործով կառավարչի անդամակցության դադարեցման որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

5.9.Սնանկության գործով կառավարչին Կազմակերպությունից հեռացնելու կամ մահվան դեպքում Դիտորդ խորհրդի որոշման կայացման հաջորդ օրը Դիտորդ խորհրդի նախագահը համապատասխան գրություն է ուղարկում սնանկության գործեր քննող դատարաններին՝ իրազեկելով սնանկության գործերով կառավարչի իրավասությունների դադարեցման վերաբերյալ:

5.10.Կազմակերպության անդամին Կազմակերպությունից հեռացնելու դեպքում նրա կողմից կատարված մուտքի և այլ վճարները վերադարձման ենթական չեն:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1.Սնանկության գործերով կառավարչի և Կազմակերպության միջև ծագած խնդիրները և տարաձայնությունները ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա»
Ինքնակարգավորվող կազմակերպության
Ընդհանուր ժողովի
---.04.2017թ. թիվ ---- որոշման

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա»
Ինքնակարգավորվող կազմակերպության
Դիտորդ խորհրդի նախագահին

_____

անուն, ազգանուն, հայրանուն

Անհատ ձեռնարկատիրոջ վկայական _____

Բնակության հասցե _____

Հեռախոսահամար(ներ)_____

Էլեկտրոնային հասցե _____

ԴԻՄՈՒՄ

(«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա»
Ինքնակարգավորվող կազմակերպության անդամ դառնալու մասին)

Հարգելի _____

հաշվի առնելով այն հանգամանքը, որ 20_____ թ. _____ _____ ին

որակավորման հանձնաժողովի կողմից ստացել եմ թիվ _____ վկայագիր,

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՄ՝

☐ դատարանի վճռով չեմ ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

☐ չեմ դատապարտվել դիտավորությամբ կատարված հանցագործության համար,

☐ դատապարտվել եմ դիտավորությամբ կատարված հանցագործության համար և իմ դատվածությունը մարված է (հանված է)

ԾԱՆՈԹԱՑԵԼ ԵՄ՝

«ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կանոնադրության, Կառավարչի վարքագծի կանոնագրքի, Կազմակերպությանն անդամակցության կարգի, Անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափերի ու վճարման վերաբերյալ կարգի, Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական

վարույթի իրականացման կարգի դրույթներին և խնդրում եմ դրանք կիրառել իմ նկատմամբ:

Խնդրում եմ

ինձ անդամագրել Հայաստանի Հանրապետության «Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության կազմում:

Կից ներկայացվում է՝

1. անձնագրի պատճենը,
2. բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմի պատճենը,
3. պետական լիազոր մարմնի կողմից տրված որակավորման վկայականի պատճենը,
4. որևէ կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման կամ ղեկավարման հետ կապված պաշտոններ զբաղեցնելու կամ համապատասխան ստաժավորման վերաբերյալ տեղեկանք,
5. անհատ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար սահմանված կարգով տրված վկայականի պատճենը (առկայության դեպքում),
6. տեղեկանք դատվածության վերաբերյալ,
7. անդամակցության մուտքի վճարի վճարման անդորրագրի պատճենը,
8. 3x4 չափի երեք գունավոր լուսանկար:

«___»_____20____թ. / _____ /_____/

ստորագրություն անուն, ազգանուն, հայրանուն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա»
Ինքնակարգավորվող կազմակերպության
Ընդհանուր ժողովի
---.04.2017թ. թիվ ---- որոշման

ՇՐՋԻԿ ԹԵՐԹԻԿ

«Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա»
Ինքնակարգավորվող կազմակերպության անդամակցության դադարեցման վերաբերյալ

_____
Մնանկության գործով կառավարչի անուն, ազգանուն, հայրանուն

№	պաշտոն	անուն, ազգանուն	ամսաթիվ	ստորագրություն
1.	Դիտորդ խորհրդի նախագահ			
2.	Գործադիր տնօրեն			
3.	Կարգապահական հանձնաժողովի նախագահ			
4.	Վերահսկիչ ծառայության ղեկավար			
5.	հաշվապահ			